

# HANDES AMSORYA

ZEITSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՁԵՐՁ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԱՅԻԱՆԷ ՔՈՉԱՐԵԱՆ, Դուին հնավայրի ձեւաւորման ընթացքը	1
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿԵԱՆ, Աքեմենեան Պարսկաստանի Աստղապութեան տարածքը Ք. Ա. Զ.-Դ. դարերում	21
ՏԱԹԵԻԻԿ ԱԹԱՅԵԱՆ, Հեղինակային ինքնագիտակցութեան խնդիրը Մմբատ Սպարապետի «Տարեգրքում»	39
SAMVEL GRIGORYAN, The location of Drazark	61
ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼԵԱՆ, Մալաթիայի գրաւումը մամլուքների կողմից 1315թ. եւ Կիլիկեան Հայաստանը	85
ԴԱԻԻԹ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ՄԵՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Երեմիա Քէօմիւրճեան. Կոնտակ եկեղեցւոյս Սուրբ Կարապետի, որ ի զգին Կրիտեա Գանտիա կոչեցելոյ	147
ՔՐԻՍԻՆԷ ԿՈՍԻԿԵԱՆ, Երեւանի խանութեան հայ մելիքները ԺԹ. դարի սկզբին Հարաւային Կովկասի շուրջ ոռուս-իրանական հակամարտութեան սրման շրջանում	219
ՅՈՎՀԱՆՆԵՆ ԶԱՏԻԿԵԱՆ, Սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները Կարինի նահանգում ԺԹ. դարի երկորդ կէսին, ի. դարի սկզբներին.	235
ANUŞ KAZAN ASADUROĞLU, Les Arméniens islamisés dans les « Takiirs » (1869 – 1895)	253
ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ, Անտիկ փաստաթուղթեր Կիլիկեան կոտորածներու օրերուն Մարաշի հայութեան իրավիճակին մասին	303
ԱՐՄԷՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, 1914-1918 թթ. Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան խնդիրների լուսաբանումն արեւելահայ մամուլում	341
ԼՈՒՌԻՆ ՄԱՆԱՍԵԱՆ, Սփիւրքահայ գրականութիւնը Յակոբ Օշականի գնահատմամբ	365
ԶՈՒԳԱՍՏԵԱՆ ԷՄՄԱՆ, Նկատառումներ Կեռան թագուհու եւ նրա պատուիրած 1272թ. Աւետարանի վերաբերեալ	381
ԱՐՄԷՆ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ, Վաղուհասի Ս. Տիրամայր վանքի վիմագրերը	399
ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հայ ժողովրդական հերոսական էպոս	427
ՍԱՐԳԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Այծապաշտութեան հետքերը այբուբեններում	443
ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, Դրիգոր Նարեկացուն վերաբրուած Խրատի «Մատենագիրք Հայոց»-ում որպէս Նարեկացու գրական երախայրիք տպագրելու շուրջ	463
ՔՐԻՍԻՆ ԿՈՍԻԿԵԱՆ, Յուցակ Մատենագարանի պարսկերէն ձեռագրերի	485

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԳԱԼՈՒԽ ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏՈՎ

THIS PUBLICATION HAS BEEN SUBSIDED BY

THE GALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ - ԵՐԵՒԱՆ, 2017

Herausgeber, Eigentümer und Verleger:  
Mechitharisten-Congregation, 1070 Wien, Mechitaristengasse 4

Redaktion: P. Paul Kodjalian, Fürden Inhalt verantwortlich: Erzb. Levon Zekian.

Alle 1070 Wien, Mechitaristengasse 4

## ՎԱՂՈՒՀԱՍԻ Ս. ՏԻՐԱՄԱՅՐ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Արսեն Յարութիւնեան, Տիգրան Ալեքսանեան

Վաղուհաս գիւղը (յայտնի նաեւ Վաղաւուզ, Վագուաս, Վաղահաս եւ այլ անուանաձեւերով) Արցախ աշխարհի Խաչէն գաւառի Հնագոյն բնակավայրերից է, որը գտնւում է ներկայիս ԼՂՀ Մարտակերտի շրջանում, Թարթառ-Տրոռ գետի աջափնեայ ճորալանջի բարձրադիր վայրում<sup>1</sup>: Գիւղը եւ նրա շրջակայքը հարուստ են պատմաճարտարապետական յուշարձաններով. գիւղամիջում է գտնւում Վաղուհասի վանքը՝ յայտնի նաեւ Ս. Տիրամայր<sup>2</sup> կամ Մայրաքաղաք<sup>3</sup> անուններով, իսկ շրջակայքում են Կարմիր վանքը (Բերդանորի Ս. Գրիգոր), Եղցու Թալա, Հին Վա-

ղուհաս, Վարդանլու գիւղատեղիները՝ իրենց աւերակ եկեղեցիներով ու գերեզմանոցներով<sup>4</sup>:

Գիւղամիջեան Ս. Տիրամայր վանքի աւերակների զգալի մասը ծածկուած է հողով եւ առատ բուսականութեամբ (նկ. 1): Համաձայն գաւթի ներսում կառուցուած շինութիւններից մէկի կամարակապ որմնախորշում ագուցուած սալաքարի արձանագրութեան՝ վանքը վերակառուցուել է 1183 թ. Վախտանգի որդի Հասանի կողմից (արձ. 2): Վանական համալիրից պահպանուել են ուղղանկիւն յատակագծով եկեղեցին, հիւսիսից յարող գաւիթը եւ վերջինիս արեւելեան մասում՝ հիւսիսից հարաւդասաւութեամբ իրար կից չորս կառոյցները (երեքը՝ համեմատաբար լաւ վիճակում), որոնցից հարաւային երկուսն ունեն մէկ ընդհանուր մուտք (նկ. 2): Տեղագիր Մակար եպս. Բարիսուտարեանցի նկարագրութեամբ՝ «տարօրինակ ձեւ ունի գաւթիթս, որի արեւելեան հիւսիսային անկիւնն գրադարան է, իսկ արեւելեան միջին եւ արեւելեան հարաւային մասն երկու խորաններ եւ արեւմտեան մասն՝ գաւիթ, որի ամբողջ կամարներն խոնարհուած են...»<sup>5</sup>: Կարծում ենք՝ գաւթի նշուած շինութիւնները սկզբնապէս իբրեւ մատուռ են կառուցուել<sup>6</sup> եւ յետագայում միայն

- 1 Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախչեան, Հ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետեւ՝ Տեղանունների բառարան), Բան. 4, Երևան, 1998, էջ 742:
- 2 Պատմաբան Շահեն Մկրտչեանը նշում է, որ համալիրը Տիրամայր վանք է անուանուել շնորհի եկեղեցու առկայ Տիրամօր մեծադիր որմնանկարի (Ծ. Մկրտչեան, Լեռնային Հարարադի պատմաճարտարապետական յուշարձանները, Երևան, 1985, էջ 57):
- 3 Միջնադարում նշանաւոր վանքերն ու եպիսկոպոսաթիւն կենտրոնները կոչուել են նաև մայրաքաքներ, ինչպէս օրինակ՝ Տաթևի վանքը (Հ. Ղեւոնդ Ալիշան, Հայապատում. պատմիչը եւ պատմութիւնը Հայոց, Բան. Ա, Վենետիկ, 1901, էջ 269, ծնթ. 4): Սարգիս արք. Զալալեանցի Վկայութեամբ՝ Վաղուհասի մենաստանը յայտնի էր Մայրաքաջար անունով, որը «...այժմ եւս կոչի նոյն անուամբ վասն լինելոյ եպիսկոպոսարան Մեծին կումէից» (Սարգիս արք. Զալալեանց, Շամապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, մասն Բ (այսուհետեւ՝ Զալալեանց, Բ), Տիգիսի, 1858, էջ 231, տես նաև Տեղանունների բառարան, Բան. 4, էջ 742-743): Վանքերի Մայրաքաղաքը կոչուելու մասին տես նաև Տ. Ալեքսանեան, Միջնադարեան վանքերը «մայրաքաղաք» կոչելու հարցի շուրջ- «Եջմիածին», 2016, Ե, էջ 107-111:

4 Դիւան հայ վիմագրութեան (այսուհետեւ՝ ԴՀՎ), պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երևան, 1982, էջ 112, 115:

5 Մակար եպս. Բարիսուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ (այսուհետեւ՝ Բարիսուտարեանց), Երևան, 1999, էջ 259-260 (Վերաբարատարակութիւն):

6 Վանական համակառոյցում մի քանի մատուի առկայութիւնը եզակի երեսոյց չէ եւ պայմանաւորուած է ԺԲ.-ԺԴ. դր. հանգուցեալի հոգու փրկութեան համար մատուցուող պատարագնե-

ծառայել են որպէս գրատուն-մատենադարան: Գրատան երբեմնի գոյութեան մասին են վկայում շինութիւնների պատերի մեծադիր խորչերը, ինչպէս նաև՝ վիմագրերից մէկը (արձ. 5): Նկատառելով այդ՝ գաւթի արեւելեան կողմում կառուցուած շինութիւնները մենք պայմանականօրէն կոչում ենք գրատան խցեր:

Վանքի շուրջ տարածուել է միջնադարեան ընդարձակ գերեզմանոցը՝ «բազմաթիւ եւ գեղեցիկ խաչարձաններով»<sup>7</sup>, որից այսօր գրեթէ ոչինչ չի պահպանուել: Այստեղ թաղումներ են արւում նաեւ մեր օրերում, ինչի հետեւանքով ամբողջութեամբ խաթարուել է յուշարձանի երբեմնի տեսքը: Կորստեան է մատնուել նաեւ վանքի շրջապարիսպը, որի գոյութեան մասին վկայում է դեռեւս Սարգս արք. Զալալեանցը<sup>8</sup>: Խորհրդային տարիններին վանքի մի շարք շինութիւններ քանդել եւ սրբատաշ, արձանագիր քարերն ու խաչքարերն իբրեւ շինաքար օգտագործել են կոլտնտեսութեան պահեստի կառուցման համար<sup>9</sup>:

Ցուշարձանը բարեկարգելու մտայնութեամբ՝ Վաղուհասի հոգեւոր հովիւ Տ. Թովհաննէս քահանայ Թովհաննիսեանի նախաձեռնութեամբ եւ Գրիգոր Հայրապետեանի միջոցներով Արցախի Զքոսաշըզու-

7 Ի թուաքանակի աճով, որոնք յաճախ կատարում էին միաժամանակ: Նման իրավիճակ է փաստագրուել նաև Վաղուհասից ոչ հեռու գտնուող Հանդաբերդի վանքի պեղումների ժամանակ (տե՛ս Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան, Հանդաբերդի վանքը եւ մրա պեղումները, Երեան, 2009, էջ 30):

8 Եղիշէ (Յովկակիմ) աւագ քահանայ Գեղամեանց (Հայկունի), Պողոսացական ակնարկներ (այսուեւն՝ Հայկունի), ՀԾՈՒ հիմնադրամ, գիրք ԺԴ, Երեան, 2010, էջ 68 (Վերահրատարակութիւն):

9 Զալալեանց, Բ, էջ 232-233:

10 Զեռնարկուած աշխատանքներին զուգահետ մեր կողմից հաւաքուել եւ Վաղուհասի նորակառոյց եկեղեցու բակ են տեղափոխուել նաև վերոյիշեալ քարաքերները, որոնք առանձին քննութեան առարկայ են (- Տ. Ա.):

թեան եւ պատմական միջավայրի պահպանութեան վարչութիւնը 2014-2015 թթ. վանքի գաւթի եւ նրան յարակից կառոյցների տարածքում իրականացրեց մասնակի պեղման եւ մաքրման աշխատանքներ (ղեկավար՝ հնագէտ Տիգրան Ալեքսանեան): Պեղումներով հիմնականում բացուեցին գաւթի պատերի ստորին շարերը: Պարզուեց, որ կառոյցն ունեցել է երկու մուտք՝ արեւմտեան եւ հարաւային. վերջինով միանում էր եկեղեցուն: Յետագայ նորոգումների ժամանակ պատերի շարուածքում իբրեւ շինաքար օգտագործուել են նաեւ խաչքարեր, արձանագիր քարեր ու դրանց բեկորներ, որոնց շարքում են նաեւ սոյն հետազոտութեան առարկայ վիմագրերը: Տեղագիր-բանահաւաք Եղիշէ աւ. քհն. Գեղամեանցը (Հայկունի) Արցախի մի շարք գաւառներում 1885 թ. ամռանն իրականացրած ճանապարհորդութեան տպաւորութիւնների նօթերում փաստում է, որ Վաղուհասի վանքի «արձանագրութեանց քարերի մեծ մասը պոկած, հանած է, մի մասն է՝ թակած-փչացրած»<sup>10</sup>:

Հնագիտական պեղումների ընթացքում մեզ յաջողուել է վիմագրերը միայն լուսանկարել՝ վերծանութիւնները վերապահելով յետագայ աշխատանքներին: Քննութեան ենթակայ շուրջ մէկ տասնեակ արձանագրութիւններից վեցն առաջին անդամ է շրջանառուում, լրացումներ ու ճշգրտումներ են արուել հրատարակուած վիմագրերում, իսկ վերջում, իբրեւ յաւելուած, յուշարձանի վիմագրական նիւթն ամբողջացնելու նպատակով զետեղել ենք Վաղուհասի վանքից յայտնի արձանագրութիւններ, որոնք մենք չենք տեսել: Վիմագրերը ներկայացւում են ժամանակագրական կարգով, վերծանութիւններին կից գրչանկարներով<sup>11</sup> (վերջում զետե-

10 Հայկունի, էջ 68:

11 Արձանագրութիւնների գրչանկարները՝ Արսէն Յարութիւնեանի:

դուած են նաեւ լուսանկարները) եւ նախորդ հրատարակութիւնների մատենագիտութեամբ։ Նախընտրել ենք վերծանութիւններում օգտագործել «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարում կիրառուող պայմանական նշանները։

Վաղուհասից որոշ վիմագրեր առաջին անգամ յիշատակել են ԺԹ. դ. տեղագիր-բանահաւաքները։ Սարգիս արք. Զալալեանցն իր տեղագրական աշխատութեան երկրորդ հատորում Վաղուհասի վանքից վկայակոչել է ընդամենը 4 վիմագիր<sup>12</sup>, Հայկունին՝ 1 արձ.<sup>13</sup>, Մակար եպս. Բարիսուտարեանցը՝ 5 արձ.<sup>14</sup>. Վիմական տարեգրում Կարապետ Կոստանեանցը զետեղել է հրատարակուած վիմագրերից միայն 4-ը<sup>15</sup>: «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի Արցախի պրակում Սեղրակ Բարիսուտարեանը փորձել է ամբողջացնել տեղի վիմագրերը՝ հրատարակելով 11 արձանագրութիւն, որոնցից 7-ն անձամբ չի տեսել եւ ներկայացրել է ըստ նախորդ հրատարակիչների<sup>16</sup>: Արցախի պատմաճարտարապետական յուշարձանների ուսումնասիրութեան համատեքստում Շահէն Մկրտչեանը Վաղուհասից եւ շրջակայ հնավայրերից հատուածաբար թուով 5 արձանագրութիւն է վկայակոչել<sup>17</sup>: Մեր պեղումներով փաստագրուած վիմագրերը (նախկինում հրատարակուած եւ նորայայտ)՝ ստորեւ.

12 Զալալեանց, Բ, էջ 232-233:

13 Իր ճանապարհորդական տպատրութիւնների նօթերը Հայկունին նախապէս հրատարակել է «Մեղու Հայաստան» պարբերականի 1885 թ. համարներում. մատենագիտութիւնը տես՝ Հայկունի, էջ 7, ծճթ. 23:

14 Մակար եպս. Բարիսուտարեանց, Աշ. աշխ., էջ 260:

15 Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեամց Հայոց (այսուհետեւ՝ ՎՏ), կազմեաց՝ Կ. Կոստանեանց, Ս. Պետերուրգ, 1913, էջ 35, 55, 62, 111:

16 ԴէՎ, պրակ V, էջ 113-115, արձ. 373-383:

17 Յ. Մկրտչեան, Աշ. աշխ., էջ 56-58:

1. ԽԱԶՔԱՐԻ ԲԵԿՈՐ. Կանգնեցուած է եղել գաւթի մէջ՝ գրատան զոյգ կառոյցների մուտքից ձախ, ստորին մասում՝ 2 տող.



... ՐԱՐԵԽՆԱԽ ՀՈԳՈ ԻՄՈ ՏՎԻ  
Զ/ՔԱՐԱՑՀՈՒՋՆ ՇՈՐ, ԹՎԼԻՆ Ո.  
(1151):

Վիմագրի սկզբնամասը, որն ըստ էութեան զետեղուած է եղել խաչքարի քիւին, չի պահպանուել: Ենթադրելի է, որ այն խաչքարային յիշատակագրութիւններին յատուկ ԿԱՆԳՆԵՑԱԿ ՍՈՒՐԲ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԽ բանաձեւային ձեւակերպումը պէտք է լինի: Ուսի նուիրատուական բնոյթ. խաչքար է կանգնեցուել ինչ-որ մէկի (անունը չի պահպանուել) հոգու բարեխօսութեան համար, որի դիմաց Քարահունջից (վիմագրում Քարայհունջ) ձոր է նուիրաբերուել (թերեւս՝ տեղանք, հողատարածք իմաստով), հաւանաբար, Ա. Տիրամայր վանքին: Արցախում Քարահունջ անունով երկու բնակավայր է յիշատակւում՝ Մարտակերտի եւ Մարտունու շրջաններում: Առաջինը, որն, ըստ ամենայնի, վիմագրում վկայուածն է, աւերակ գիւղատեղի է Հաթերք գիւղի հարաւարեւմտեան կողմում: Պահպանուել են միջնադարեան փոքր եկեղեցու, բերդի աւերակները, յարակից գերեզմանոցը<sup>18</sup>: Վիմագրի գիւղը կարեւորւում է բնակավայրի՝ գեռեւս ԺԲ. դարակէսից այդօրինակ անուամբ յիշատակուելու առումով:

Խաչքարի հարաւային կողին պահպանուել է յետագայի եւ այլ գրչութեամբ

18 Տեղանունների բառարան, հտ. 5, Երևան, 2001, էջ 314-315:

արձանագրութեան հատուած (3 տող), անկապակից. ՈՍ / ԱԼԵՈ / ԻՄԱՅ:

**2. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. ագուցուած**  
գրատան զոյգ կառոյցների մուտքից աջ՝  
կամարակապ որմնախոռ, ուստի 9 տոռ.



† : ԱԼԲ: (1183) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԼԱՐՍ/  
ՀԱՌՈՑ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԼԱՐՍ  
ՏՐ ԳՐԻԳՈՐՈ, ԵՄ ՀԱՍԱՆ, / ՈՐԴԻ  
ՎԱՐՆՈՂԱՆԳԱ, ԾԻՆԵՑԻ /  
ԶԵԿԵՂԵՑՑԻՔ ԲԱԶՄԱԻԵՐ ՎԱՍՆ  
ՑԱՆՑԱՆԱՑ ԻՄՈՑ ՔԱԻՈՒԹԵԼԱՐՆ  
ԵՒ ԻՄ ՀՈԳՈՑՍ ԲԱՐԵԽԱԽԱՆ ԱՌ / ԱԾ,  
ՈՐ ՐԵՐԿԻՐՊԱԳԱՆԵՔ ԶՀԱՍՄԱՆ  
ՑԱՂԱԻԹՍ ՑԻԾԵՔ ԵՒ ԱԾ ԶՋԵԶ  
ՑԻՉՈՒ:

Հրատ. Զալպեանց, Բ, 232,  
Բարխուտարեանց, 260, ՎՏ, 35,  
ԴՀԿ, V, 112, արձ. 373, Մկրտչեան, 57:

Քարը տեղ-տեղ վնասուած է, ինչի  
հետեւանքով որոշ բառեր կիսաեղծ են,  
բայց՝ վերծանելի: Նախորդ հրատարակիչ-  
ները վերծանութիւնը հիմնականում պա-  
կասաւոր ու աղաւաղուած են ներկայաց-  
րել. Զալալեանցն ու Բարխուտարեանցը  
ՎԱԽՏԱՆԳ անունը կարդացել են ՎԱ-  
ՍԱԿ, 7-րդ տողի ՀՈԳՈՅՑ ԲԱՐԵԽԱՒ-  
ԱՌ-ը «Դիւանում» կարդում ենք ՀՈԳՈՅՑ  
ԱՐԱՐԵՆ ... ԱՌԱՋ, 8-րդ տողում ՈՐՔ  
ԵՐԿՐՊԱԳԵՔ ՀԱՍՍՆԱՅ, իսկ 5-րդ տողի  
ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԲԱԶՄԱԽԵՐ բառակապակ-  
ցութիւնն ընդհանրապէս չեն կարդացել  
(«Դիւանում» ԶԵԿԵՂԵՑԻՔ ...), որի լրա-

ցումը վանքի ստեղծման ժամանակը ճշտելու առումով մեծապէս կարեւորւում է: Վախտանգի որդի Հասանը ոչ թէ կառուցել, այլ, թերեւս, Գրիգոր Դ. Տղայ (1173-1193 թթ.) Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք վերականգնել է աւերուած շինութիւնները, ինչի մասին լրացուցիչ յուշում է նաեւ վիմագրի տեղադրութիւնը: Նշուած նորոգումների արդիւնք կարող է լինել նաեւ գրատան խցերի պատերի շարուածքում որպէս շինաքար օգտագործուած թերի եւ ամբողջական խաչքարերի ու արձանագիր քարերի առկայութիւնը: Յուշարձանի հետազոտութեան ներկայիս վիճակը հնարաւորութիւն չի տալիս առաւել յստակ խօսել համակառոյցի աւերման պատճառների եւ ժամանակի մասին: Սակայն, ելնելով մատենագրական վկայութիւններից, տեղին է կարծել, որ վանքի մասնակի կամ ամբողջական փլուզման պատճառ կարող էր լինել 1139 թ. Գանձակի երկրաշարժը. «Ի ՇԶԼ (1139) թուականին եղեւ շարժ սաստիկ եւ կործանեցաւ քաղաքն Գանձակ, եւ տապալեցան շինուածք, որ ի նմա...»<sup>19</sup>: Երկրաշարժի հետեւանքով աւերուել են նաեւ Խաչէնի բազմաթիւ գիւղեր՝ վանքերով ու եկեղեցիներով. «որով շարժմամբ բազում աւերումն լինէր ընդ բազում տեղիս ի գաւառիս Փառիսոսոյ եւ Խաչինոյ... եւ ի լեռնակողմանսն բազում դղեակք եւ գիւղք տապալեցան հանդերձ վանորայիւք եւ եկեղեցեաւք...»<sup>20</sup>:

Այժմ անդրադառնանք վիմագրում  
յիշատակուած Վախտանգի որդի Հասա-  
նին: Յայտնի է, որ ԺԲ. դ. երկրորդ կէսից  
Խաչէնում հաստատուեց Առանշահիկ տէ-

19 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց,  
աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի,  
Երևան, 1961, էջ 117:

20 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Ա-  
ղուածից աշխարհի, քննական բնագիրը Եւ Ան-  
դրածութիւնը Վ. Առաքելեանի, Երևան, 1983, Յա-  
ւելուած Բ, էջ 352. Հ. Գևոնդ Ալիշան, Հայապա-  
տում, նոյ. 11, էջ 361:

րերի եռաճիւղ իշխանութիւն՝ Ներքին Խաչէնի կամ Խօխանաբերդի, Կենտրոնական Խաչէնի կամ Հաթերքի եւ Վերին Խաչէնի կամ Շարի: Ստեղծուած իշխանութիւնները մշտապէս գոյատեւել են նրանցից մէկի գահերէցութեամբ: Ազգբում այն պատկանում էր Հաթերքիներին, ապա կարճ ժամանակով անցաւ Շարի տէրերին, իսկ Ժ. Ժ. Խաչէնի գահերէց տէրեր ճանաչուցին միայն խոխանաբերդցիները<sup>21</sup>: Ժ. Պ. երկրորդ կէսին գահերէց տէրը Հաթերքի գահակալն էր՝ իշխանաց իշխան Հասանը (1142-1182 թթ.): 1182 թ. նա թողնում է իշխանութիւնը, կնոջ հետ միասին հրաժարում աշխարհիկ կեանքից եւ կրօնաւորութեան գնում Դադիվանք՝ պատմութեան մէջ մնալով «Հասան Մեծ Կրօնաւորեալ» մականուամբ<sup>22</sup>:

Դադիվանքի խաչքարերից մէկի (Խախինում կոչուած՝ «խաչվիմ») արձանագրութիւնը բաւական ուշագրաւ տեղեկութիւններ է Հաղորդում ոչ միայն Հասանի իշխանութեան սահմանների («...տէր Հաթերքոյ եւ Հանդաբերդոյ, Խաչինաբերդոյ եւ Հաւախաղցին...»)<sup>23</sup>, այլեւ նրա գահակալութեան 40 տարիների ընթացքում տեղի ունեցած պատերազմական իրադարձութիւնների եւ կրօնաւորութեան գնալու մասին. «...կացի յաւագութեան ամս :Խ: (40) շատ պատերազմաւ եւ յաղ-

թեցի թշնամեաց իմոց... եւ եկի ի վանքս մաւտ յիմ եղբայրս ի Տէր Գրիգորէս եւ եղէ կրաւնաւոր...»<sup>24</sup>: Մեր կարծիքով՝ Ս. Տիրամայր վանքի եկեղեցիները վերականգնողը հէնց Հասան Կրօնաւորեալն է, ով այդ գործին ձեռնամուխ է եղել վանական կեանքին անցնելու յաջորդ տարին:

3. ԽԱՉՔԱՐ. ագուցուած գրատանձախից երկրորդ խցի մուտքին կից, գիրը՝ ստորին մասում, 6 տող, թուականը հորիզոնական խաչաթեւերի տակ՝ 2 տող.



ԹԻՒ/Ն ՈԽԵ. (1196) / ԷՐ:

ԵՍ ՏՐ ԳՐԻԳ/ՈՐ,  
ԿԱՆԳՆԵՑ/Ի ԶԽԱՀՍ  
Ի Տ/ԱՊԱՆԻ ՀԱԻ/Ր  
ԻՄՈՑ ՍՏԵՓԱՆՈՒՄ/Ի,  
ՅԱՂԱԿԻԹՍ ՑԻԾԵՑԵՔ:

Խաչքարի վերին աջ հատուածը վնասուած է, քանդակային յօրինուածքում հիմնախաչը երեք կողմից բոլորում է հիւսածոյ եզերազարդը, խաչատակից սկիզբ առնում եւ մինչեւ Հորիզոնական թեւերն է ձգում արմաւազարդը, իսկ վերնամասի խաչախորքը զբաղեցնում են խաղողի զոյտ ողկոյզները: Խաչքարը կանգնեցրել է Հոգեւոր սպասաւոր տէր Գրիգորն իր Հօր՝ Ստեփանոսի գերեզմանին՝ իբրեւ մահարձան: Հաւանական է, որ այս կոթողը եւս երկրորդական օգտագործման ժամանակ ծառայել է իբրեւ շինաքար, սակայն չպէտք է բացառել, որ այն կանգնեցուել է

21 Բ. Ուլուբարեան, Խաչէնի իշխանութիւնը X-XVI դդ., Երևան, 1975, էջ 123:

22 Հասան Մեծի և Արա տոհմի մասին առանել մանրամասն տեսն Ս. Յակոբեան, Խաչէն-Խօխանաբերդի ամրոցը և Արա իշխանատոհմը Թ. Ժ. Դարերում, «Հանդէս ամսօրեալ», Ծի՛ր տարի, Վիեննա-Երևան, 2010, ս. 71-170 (յատկապէս ս. 107-138):

Յօդուածի վերաբերեալ արուած շահնեկան նկատառումների համար շնորհակալութիւն ենք յայտնում պատմաբան-արեւելագէտ Ալեքսան Յակոբեանին:

23 ԴՀՎ, պրոկ V, էջ 198, արձ. 707. Ս. Կարապետեան, Հայ մշակութի յուշարձամները Խորհրդային Աղրբեշամին բռնակցուած շրջաններում, Երևան, 1999, էջ 118, արձ. 72:

24 Նոյն տեղերում:

**Ստեփանոսի գերեզմանին, որը թաղուած է գաւթում:**


4. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. աղուցուած  
գրատան զոյգ կառոյցների մուտքից ձախ՝  
կամարակապ որմնափորշում, 4 տող.



Հրատ. ԴՀՎ, V, 112, արձ. 374:

Առաջին տողը, որն ի տարբերութիւն  
միւսների՝ ելնդատառ է, եղծուած է եւ  
միայն առանձին տառեր են ընթերցւում  
(սկզբում՝ ԱԾ - Աստուած): Ս. Բարխուդա-  
րեանն արձանագրութեան սկզբնատողն ու  
վերջին երկու բառը չի կարդացել: Դատե-  
լով տառածեւերից եւ փորագրման եղանա-  
կից՝ հարազատ է ԺԲ. դարին, աւելին՝ հա-  
ւանական է, որ թիւ 2 արձանագրութեան  
ժամանակակիցն ու միեւնոյն գրչի ձեռա-  
գործն է: Վիմագիրը պարզում է վանքի  
սպասաւոր տէր Սահակ քահանայի անունը:

5. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. ագուցուած  
գրատան ձախից առաջին խցի հարաւային  
պատին, 8 տող.



ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ | ՀՏՐ /  
ԳՐԻԳՈՐՈ, ԵՍ ՍԻՄԵՈՆ ԵՒ  
ԵՂԲԱՐՔ ԻՄ, ԵՑՈՒ ԾԻՆԵԼ

ԶՓՌՆԱ/ԽՈՒՑԱ ԵՒ ԿԱԶՄԵԼ  
ԶԳՐԱ/ՏՈՒՆՆ, ԵՂԲԱՐՔԻՄ  
ԵՏՈՒՆ / :Բ: (2) ԱԽՐ ՊԱՏԱՐԱԳ  
Ի ՏԼԱՐԱՋԵՆ, /ԿԱՏԱՐԻՉԼՔԵՆ  
ԱԽՐՀՆԻՆ ՑԱՅ, / :Ա: (1) ՍԵՐՈԲԱ,  
Ա: (1) ՍԵՒԱԴԻ:

Հրատ. Հայկունի, 69,  
Բարխուտարեանց, 260,  
ԴՀՎ, V, 114, արձ. 378:

Ս. Բարիխուղարեանն այս վիմագիրը  
չի տեսել, ինչը ստիպել է գիտնականին  
այն ներառել կորած վիմագրերի շարքը:  
Նախորդ հրատարակիչների վերծանութիւ-  
նը թերի է եւ սիսալաշատ: Հայկունին այն  
վերագրում է ինչ-որ եպիսկոպոսարանի եւ  
կարծում, որ Վաղուհասի եկեղեցին եւ ե-  
պիսկոպոսարանը կառուցուել են ԺԴ. դա-  
րասկզբին: Քարն իր սկզբնական տեղում  
չէ, նախորդների պէս այն եւս ծառայել է  
իբրև երկրորդական օգտագործման շինա-  
քար, ինչը կարող էր նաեւ թիւրիմացու-  
թիւնների տեղիք տալ:

Վիմագիրը վկայում է տէր Գրիգորի  
առաջնորդութեան օրօք վանքում ինչ-որ  
«փոնախուց» կառուցելու եւ գրատուն  
«կազմելու» մասին։ Կարծում ենք՝  
«փոնախուցը» նոյն փոնատունն (փուա-  
տուն) է, այսինքն՝ այն կառոյցը, որտեղ  
գտնւում է փուռը<sup>25</sup>։ Միաբանութիւն ու-  
նեցող խոշոր վանքերում բաւական զար-  
գացած էր նաև վանական տնտեսութիւ-  
նը։ Փռի աշխատող-վերակացուին հացան  
կամ փոնապան էին կոչում<sup>26</sup>։ Եթէ զար-

25 Է. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական  
բառարան, Բայ. Բ. Երևան, 1976. Էջ 1539.

26 Ակների անապատում՝ 1261 թ. գրության ՄՄ թիւ  
1481 ձեռագիր գրչութեան ծավալուն յիշատակա-  
րանում գրիչ Դափիք Բջնեցին հոգեւոր դասից  
խնդրում է. «...զթորոս միակենաց և զԳրիգոր, որ  
աշխատեցան ի կոկ թղթին, նաեւ զննեն և  
զմարմապան (մառնապան - Ա. Յ.) և զհացապան և  
զփոմպան և զամենայն աշխատողս առ Քրիս-  
տոս յիշել...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց  
Մաշտոցի անուան Մատենադարանի, Խո. Դ.

գացած միջնադարից այդօրինակ վկայութիւնները սակաւ են, ապա ժէ.-ժԸ. դդ. անհամեմատ որոշակի են: Պատմագիր Առաքել Դաւրիթեցին Հաղորդում է, որ 1627 թ. մտնելով Ս. Էջմիածին՝ Մովսէս վարդապետը (յետագայում կաթողիկոս՝ Մովսէս Գ. Տաթեւացի՝ 1629-1632 թթ.) «ի հիմանց» նորոգել է ողջ Համալիրը՝ կառուցելով շուրջանակի պարիսպ, իսկ «...ի հիւսիսային կողմն եւ յարեւելեան կողմն շինեցին խցեր ի տնտեսատուն, փոնատուն, ամբարանոց ցորենոյ եւ այլ նիւթոց»<sup>27</sup>: Աւելի ուշ Սիմէոն Ա. Երեւանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսը փոնատանը կից ամբարանոց է կառուցել, որը նորոգել եւ այլ շինութիւններով է Համալիրել նրա յաջորդ Ղուկաս Ա. Կարնեցին (1780-1799 թթ.): Մայրավանքի վիմագրերից մէկում այդ մասին կարդում ենք Հետեւեալը. «...շինեցան կամարակապ դուռնըս եւ արեւելակողմն ներքնայարկս, որքն եւ վէց խուցք եւ մի ամբարանոց բրնձոյ, հանդերձ կցորդ շինուածովքն...»<sup>28</sup>: Ըստ ամենայնի՝ յիշատակուած են վանքի տնտեսատան կամ Հէնց նոյն փոնատան խցերը, որոնք Վաղուհասի վիմագրում կարող էին պարզապէս փոնախուց կոչուել: Պէտք է ենթադրել, որ քննուող վիմագրում վկայուած «փոնախուցը» փոնատան հնագոյն յիշատակութիւններից է, որի նորովի լուսաբանումը կարեւորում է բառիս գործածութեան տարրեր դրսեւորումների առումով:

Ինչ վերաբերում է վանքում գրատուն «կազմելուն» (այսինքն՝ ստեղծելուն<sup>29</sup>), ապա պէտք է յիշենք, որ զարգացած միջնա-

կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիանեան, Յ. Քէօսէեան, Երևան, 2008, էջ 1381):

27 Առաքել Դաւրիթեցի, Գիրք Պատմութեանց, աշխատահրութեամբ Լ. Ա. Խանլարեանի, Երևան, 1990, էջ 252-253:

28 Ա. Յարութիւնեան, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրութիւնները, Ս. Էջմիածին, 2016, էջ 81-82, արձ. 61:

29 Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, հոդ. Բ, Երևան, 1944, էջ 360:

գարում նշանաւոր վանքերում եւ եպիսկոպոսանիստ կենտրոններին կից գործում էին նաև գրատուն-մատենադարաններ, ինչպէս օրինակ՝ Հաղբատում, Սանահինում, Սաղմոսավանքում, Տաթեւում, Խոր Վիրապում, Թեղենեաց վանքում եւ այլուր: Այս տեսանկիւնից բացառութիւն չէ նաև Վաղուհասի Ս. Տիրամայր վանքը, որն, ինչպէս վերը նշեցինք, յայտնի եպիսկոպոսանիստ կենտրոն էր, իսկ գաւթի արեւելեան մասում կառուցուած շինութիւնների կամարակապ խորշերը վկայում են, որ այն ծառայել է նաև իբրեւ գրատուն-մատենադարան: Կարծում ենք՝ վիմագիրը լրացնում եւ հիմնաւորում է այդ իրողութիւնը՝ Համարուելով նրանց շինարարական (ստեղծման, ձեւաւորման) վկայագիրը: Նկատառելով տառաձեւերի հնագրական առանձնայատկութիւնները՝ վիմագիրը կարելի է թուագրել ոչ ուշ քան Ժ. դարով:

6. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. գտնուել է գաւթի տարածքից, 6 տող.



ԱՎԱՐԱՎԻՌՈՐԴԱՇՆ/ՈՐՀ ԵՒ  
ԶԲԱՐԵՊԱՇՏ ԶԱԹ/ԱԲԱԿՆ/  
ՈՐԴԻ ԶԱԼԱՎՈՐ/ ԽԱԶԻՆՈՑ ԵՒ  
ԽԱԶԻՆՈՑԵՐԻՆ/ ԽԱԶԻՆՈՑ ԵՒ  
ՅԱՂԱՌԻՎԵՐՈՒՄ/ ՅԱՂԱՌԻՎԵՐՈՒՄ:

Արձանագիր քարի աջակողմը բեկոր-ներով է ամբողջանում, սակայն դա վերծանութեանը չի խոչընդոտում: Յիշատա-

կուած է Խաչէնի մեծ իշխան Հասան-Զալ-Դալ-Դոլայի եւ Մամքանի որդին՝ Աթաբակը կամ Խւանէն<sup>30</sup>, որը բնութագրուում է Տիրոջից (Աստուծով) թագաւորաշնորհ եւ բարեպաշտ, «տեառն Խաչինոյ» եւ «ինքնակալ» տիտղոսներով։ Հասան-Զալալի եւ նրա ընտանիքի անդամների անունները քանից յիշատակուած են Գանձասարի, Հաղբատի, Կեչառիսի եւ այլ հոգեւոր կենտրոնների վիմագրերում։ Ուսումնասիրողներից Բագրատ Ուլուբարեանը, ընդհանրացնելով նրանց շինարարական գործունէութիւնը, գրում է. «Ամենուր նրա (Հասան-Զալալի - Ա. թ.) հետ է կինը՝ բարեպաշտուհի Մամքանը, որն ինչպէս ամուսնու հետ, այնպէս էլ նրանից զատ՝ եւ որդի Աթաբակի հետ, եւ միայնակ, եկեղեցիներ է նորոգում ու կառուցում, խաչքարեր է կանգնեցնում, օժանդակում մատեաններ ստեղծելուն, ապա նուիրում է Հայրենի վանքերին»<sup>31</sup>։

Հասան-Զալալի եղերական մահից յետոյ (1261 թ.) իշխանութիւնը ժառանգել է նրա միակ որդի Աթաբակ-Խւանէն՝ դառնալով Խաչէնի ինքնակալ իշխանը. «Եւ կալաւ զիշխանութիւն նորա Աթաբէկն՝ որդի նորա (Հասան-Զալալ-Դոլայի - Ա. թ.), հրամանաւ Հուլաւուին եւ Արդունին...»<sup>32</sup>: Կիրակոս Գանձակեցին դրուատանքով է խօսում Աթաբակի մասին՝ նրան Համարելով «այր սրբասնունդ, պարկեշտ եւ խոնարհամիտ եւ աղօթական, որպէս զմի ի

սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»<sup>33</sup>: Մեր վիմագրի 4-րդ տողի վերջում ՏեԱՌՆ բառի վերականգնումը պատահական չէ. Գանձասարի վանքի արձանագրութիւններում Աթաբակը քանից յիշատակուած է իբրեւ ՏեԱՌՆ ԽԱԶԻՆՈՅ<sup>34</sup>: Վաղուհասի վիմագրում նա յիշւում է իբրեւ ԻՆՔՆԱԿԱԼ ՍՈՒԻՐ ՈՒԽ-ՏԻՄ, այսինքն՝ իր իշխանութեան ենթակայութեան տակ էր նաեւ այս հոգեւոր կենտրոնը։ Նրա օրօք իրականացուած շինարարական աշխատանքների մասին տեղեկութիւններ գրեթէ չկան. յայտնի է, որ նա աւարտել է հօր հիմնագրած Գանձասարի գաւթի շինարարութիւնը։ Ա. Ցովհաննէս Մկրտիչ եկեղեցու արեւմտեան պատին (գաւթի մէջ) պահպանուել է գաւթի հիմնաղըման եւ աւարտման ծաւալուն արձանագրութիւնը՝ Հասան-Զալալ-Դոլայի եւ Աթաբակի անունների յիշատակմամբ։ Զնայած վիմագիրը կրում է Հայոց Զժ. (1261) թուականը, այդուհանդերձ հնարաւոր է, որ այն կառուցումից յետոյ են փորագրել՝ հիմք ընդունելով հիմնաղըման թուականը<sup>35</sup>: Աթաբակ-Խւանէն վախճանուել է 1287 թ. («Ճմեռն խիստ եղեւ. մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աթաբակ, որդի Զալալին եւ Հասան, թոռն Դաւիթին եւ ապա մեռաւ Ճարն ի Տփիսիսէ»<sup>36</sup>), այսինքն՝ վիմագիրն աներկրայ կարող ենք թուագրել ԺԳ. դ. երկրորդ կէսով։

30 Բ. Ուլուբարեանը ծանօթագրում է, որ Հասան-Զալալի եւ Մամքանի միակ որդու անունը Խւանէն է եղել, որը, հաւանաբար, հօր քենի աթաբակ-Խւանէն է։ Այսինքն՝ Խւանէի «աթաբակ» (թեկի, թագաւորի հայր) կոչումը եւս ձեռք է բերել անձնանուան Աշանակութիւն, որը գուշահետ կրել է Հասան-Զալալի որդի Խւանէն (Բ. Ուլուբարեան, նշ. աշխ., էջ 217, ծաթ. 147):

31 Բ. Ուլուբարեան, նշ. աշխ., էջ 176: Հմմտ. նաև Ա. Ցակորեան, Հասան Զալալի կին Մամքանը դուստրն էր Շնեղի Մամիկոննամ Ասլամբէկի, «Հանդէս ամսօրեալ», Ծիթ տարի, Վիեննա-Երեան., 2015, ս. 159-186:


32 Կիրակոս Գանձակեցի, էջ 392:

33 Նոյն տեղում:

34 ԴՀՎ, պրակ V, էջ 50, արձ. 122, էջ 51, արձ. 125:

35 Նոյն տեղում, էջ 40-41, արձ. 84:


36 Ստեփաննոս Եպիսկոպոսի Տարեգրութիւնը (XIII դ.), «Մամ ժամանակագրութիւններ», Խն. Ա, Երեան, 1951, էջ 48: Հմմտ. նաև Ա. Ցակորեան, Խաչէն-Խօսիանաբերդ ամրոցը եւ Արա իշխանատոնը Թ-ԺԳ. դարերում, ս. 160-167:



ԵՄ ՄԻՍԻԹԱՐ, ՄԻԱԲԱՆԵՑԱ, ՄԲ  
ԳՐԻԳՈ/ՐՈՅՍ,  
ՑԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՄՅԲ ՏՐ  
ՎԱՆԱԿ/ՈԲԱ,  
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ Ի ՏԱՐՈՒՄՆ  
:Բ: (2) Ժ/ԱՄ,  
ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ ԻՄ ՀԱԻՐՆ  
ՊԱՊԱՔ/ԻՆ],  
ԻՄ ՄԱԻՐՆ: ԵՒ ՅԵՏ ՄԵՌԾ ԻՄ: (1)  
ԻՆՉ, :Ա: (1)'  
ԱՄՈՒՄՆՈՅ ԻՄՈ Ի ՏՈՆԻ  
ՀՈԳՈՎԱԼՋՍՏԵԼԱՆ:

Վիմագրի վերջին տողում որոշ զրեր  
կիսաեղծ են: Այն բնոյթով նուիրատուա-  
կան է, համաձայն որի՝ վանահայր (առաջ-  
նորդ) տէր Վանակորի (մեզ անծանօթ ա-  
նուն է, գուցէ, պիտի ընկալել՝ «Վանալ  
Ալկորալ») օրօք ոմն Միսիթար՝ Պապաքի  
որդին, միաբանելով Ս. Գրիգորին՝ ստացել  
է երկու ժամ-պատարագ՝ իւրաքանչիւր  
տարուայ Հոգեգալստեան տօնին: Ընդ ո-  
րում, ինչպէս ընդունուած էր՝ քանի դեռ  
նա կենդանի է, պատարագները կը մատու-  
ցուեն իր ծնողների յիշատակին, իսկ վախ-  
ճանից յետոյ՝ իր եւ իր կնոջ (ամուսնու):  
Վիմագրից եւ նրա գտնուելու վայրից դա-  
տելով՝ յուշարձանախմբի կառոյցներից մէ-  
կը կրել է Ս. Գրիգոր Լուսաւորչի անունը:  
Տառաձեւերի հիմամբ՝ այս վիմագրից եւս  
հարազատ է ԺԴ. դարին:

8. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. ագուցուած  
գրատան ձախից երկրորդ խցի մուտքի ա-  
ջակողմում, 5 տող.



ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. ագուցուած  
գրատան ձախից երկրորդ խցի մուտքի ա-  
ջակողմում, 5 տող.

ԱՂՋԵՍ, ՄԼՃՔ, ՄԽԻԹԱՐ  
ՄԻԱԲԱՆԵՑ/ԱՔ  
ՄԲ ՈՒԽՏԻՄ ՑԱՌԱԶՆՈՐԴ/ՈՒԹԵԼԱՆ]  
ՏՐ ՈՀԱՆԻՍԻ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ/Մ ՏՎԻՆ  
:Բ: (2) ԺԱՄ ՄԼՃՔԱՐԱ, Ի Տ/ԱԻՆԻ  
ՄԱՐԳԱՐԷՒՑՆ, ԿԱՏԱՐԻՉՔ /  
ԼԱԽՐՀՆԻՆ ՑԱՅ:

Անձնանուններից առաջինի սկզբնա-  
տառը կիսաեղծ է, սակայն հաւանական  
ենք համարում, որ վկայուած է Աղյա արա-  
կան անձնանուան Աղյա հողովածելը: Վի-  
մագրից բնոյթով դարձեալ նուիրատուա-  
կան է. տէր Ոհանիսի վանահայրութեան  
(առաջնորդութեան) օրօք Աղյան, Մլըքն ու  
Միսիթարը միաբանել են սուրբ ուխտին, ո-  
րի դիմաց Մլըքդարան սուրբ մարգարէնե-  
րի տօնին երկու պատարագ է ստացել: Վի-  
մագրում յիշատակուած է «երկուտասան  
մարգարէիցն» (տասներկու մարգարէների)  
տօնը, որը հայ առաքելական եկեղեցին  
նշում է ամուն երկրորդ կէսին՝ Վարդա-  
վառի եւ Աստուածածնի վերափոխման տօ-  
ների միջակայքում<sup>37</sup>:


Արտասովոր է Մլըքար անձնանուան  
յիշատակութիւնը: Թայտնի է, որ բառիս  
մուլքադար ձեւը նշանակում է «կալուածա-  
տէր, մուլք (կալուածք) ունեցող»<sup>38</sup>: Են-  
թադրելի է, որ մի շարք այլ տիտղոսների  
պէս (շահանշահ, գէմեթար եւ այլն) մուլ-  
քադարը եւս վերածուել է անձնանուան:  
Թուագրում ենք ԺԴ.-ԺԴ. դդ.:

9. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. գրատան ձա-  
խից երկրորդ խցի հրւիսային պատի վե-

37 Այս մասին մեզ լուշեց Ալեքսան Յակոբեանը:

38 Հայոց լեզուի բարբառային բառարան, հտ. Պ.  
Երևան, 2007, էջ 91:

րին շարուածքում, հակառակ դիրքով, 3 տող.



...[ԲԱՐԵԽԱՍԻՍՈՒԹԻՒՆ Հ...]  
...[ԵՐԿՐՊԱԳԵՔ ԶՆԱ ԱՂԱԻՐՍ]...  
...Տ ԱՇԽԱՏԵԱՑ Ա...

Արձանագրութեան պահպանուած հատուածը, ցաւօք, գոնէ ենթագրութիւններ անելու համար որոշակի նախագրեալներ չի ստեղծում: Հարազատ է ԺԳ.-ԺԴ. դդ.:

Վանքի վիմագրերին անդրադամած տեղագիրների աշխատութիւններում ներառուած են նաեւ այլ արձանագրութիւններ, որոնք մենք չենք վաւերացրել: Ա. Բարխուդարեանը եւս «Դիւանում» դրանք ներկայացրել է չպահպանուած արձանագրութիւնների կազմում.

### 1. ԽԱՉՔԱՐ. գտնուել է բակի հիւսիսային կողմում.

Յանուն Աստուծոյ. ես՝ Յոհան, դրան խեցս Վախտանկայ, կանգնեցի զիսաշ ի տապանի որդոյ իմոյ Գրիգորայ, որ վախճանեալ է ի Քրիստո, որ եւկրպագէ յիշեցէ ի Քրիստո. թվին :ՈՂէ: (1218):

Հրատ. Զալալեանց, Բ, 233,  
Բարխուտարեանց, 260,  
Դիւան V, 114, արձ. 380:

### 2. ԳԱՒԻԹ. խորանի ճակատաքարին.

Աստուծոյ շնորհիւմ. ես՝ Կոստանդին կարողիկոս Ամենայն Հայոց, միարանեցայ եափսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդոյ իմոյ տէ՛ Մարգարին, յիշխանութեան մեծի Զալալ Դաւիթն եւ յառաջնորդութեան սորայ տեառն ներսի Աղուանից կարուղիկոսի եւ այլ սպասաւոր սուր ովտիս հաստատեցին :Ֆ: պատարագ ի տանի տեառնընդառաջին՝ :Բ: ինձ, :Ա: տէ՛ Մարգարին,

կատարիշն ատհենին յԱստուծոյ: Ով հանէ զԱւետարանս յեպիսկոպոսարանէս, ինքն եղիցի որոշեալ եւ հանեալ ի Փառացն Աստուծոյ. ի թվիս :ՈՂէ: (1246) Եր:

Հրատ. Զալալեանց, Բ, 232,  
Բարխուտարեանց, 260,  
Դիւան V, 114, արձ. 377:

Վիմագիրը չափազանց արժէքաւոր է Հայոց Արեւելից կողմանց հոգեւոր կեանքում Վաղուհասի վանական միաբանութեան դերի եւ նշանակութեան ուսումնասիրման տեսանկիւնից, մանաւանդ որ մատենագրութեան մէջ այդօրինակ տեղեկութիւնները սուղ են: Այն պարզում է Կոստանդին Ա. Բարձրաբերդցի (1221-1267) Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից վանքին Աւետարան նուիրաբերելու փաստը: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ երուսաղէմեան այցից յետոյ մատենագիր Վարդան Արեւելցին մի որոշ ժամանակ գտնուել է Կիլիկեան Հայաստանում, տեսակցել Հեթում արքային եւ կաթողիկոսին: Հայրենի երկիր կերպառնալիս նա իր հետ բերել է վեհափառ Հայրապետի «Սահմանք կանոնականքը» եւ շրջաբերականը՝ ուղղուած «յամենայն քաղաքս, եւ յաւանս, եւ ի վանորայս երեւելիս, եւ յիշխանս փառաւորս»<sup>39</sup>: Շրջաբերականում կաթողիկոսն իր Հայրապետական օրհնանքն է փոխանցել ժողովրդին եւ մեծամեծ նուէրներ ուղարկել Արեւելից կողմանց եկեղեցիներին ու վանքերին «...առաքինի կաթողիկոսն Կոստանդին առաքէ եկեղեցեացն Արեւելից ընծայս՝ մետաքսառէջս ի կերպասուց պէսպէս գունովս, եւ մեծագին նափորտս ի սպաս պատարագին սրբոյ ի ձեռն թէողոսի սպասաւորի իւրոյ...»<sup>40</sup>: Տեղին է ենթագրել, որ նշուած ընծաների շարքում էլ նաեւ Մայրաքաղաք վանքին նուիրած Աւետարանը:

<sup>39</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 294-295: Հմմտ. Բ. Ռուտրաբեան, Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակոյթը, Երևան, 2001, էջ 323:

<sup>40</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 311:

**3. ԳԱԽԻԹ. մուտքի ճակատաքարին, արտաքուստ.**

ԶԳրիգորէս եւ զմայր եւ զամուախն իւր յաղափս յիշեցլք. թիւ: (1268):

Հրատ. Բարիստարեանց, 260, Դիւան V, 114, արձ. 379:

**4. ՊԱՐԻՍՊ. գտնուել է շրջապարսպի վրայ.**

Յանուն ամենասուրբ Երրորդութեան. եւ՝ Վասակ, որդի Աթշարին, յառաջնորդութեան տեառն Յովհաննիսի եւ միաբանաց: Եւ սոխա ետուն ինձ ի տարումն :Գ: աւ ժամն, որք զայգին եւ զոօնաւեղն առնեն, դատին ի Տեառնէ:

Հրատ. Զալալեանց, Բ, 232-233, Դիւան V, 114, արձ. 381:

**Ա. Բարխուդարեանը տեղին է նկատում, որ վերծանութիւնը ստոյգ չէ:** Այս շարքում կան մի քանի վիմագրեր եւս, որոնք յարակից գիւղատեղիներից են, ըստ այդմ՝ Հարկ համարեցինք շրջանցել<sup>41</sup>:

Ամփոփելով՝ պէտք է արձանագրենք, որ Վաղուհասի Ս. Տիրամայր վանքի 2014-2015 թթ. պեղումներով վաւերացուած վիմագրերի գոյութիւնն այս հոգեւոր կենտրոնի ուսումնասիրման համար առաջնային նշանակութիւն ունի: Վերծանուած 9

վիմագրերից 6-ն առաջին անգամ են շրջանառում: Նախորդ Հրատարակիչների բացթողումներն էապէս լրացուել ու բովանդակային առումով ամբողջացուել են: Փաստելի է, որ վանքը ոչ թէ կառուցուել, այլ վերականգնուել է 1183 թ.: Վախտանգի որդի Հասան Մեծ իշխանի նախաձեռնութեամբ: Ինչպէս նորոգումից առաջ, այնպէս էլ յետագայում վանքն ունեցել է ստուար միաբանութիւն ու տնտեսութիւն, գուցէ իրօք եղել է Մեծ Կողմանքի կամ Մեծ իրանքի եպիսկոպոսական նստոցներից մէկը եւ գիտակրթական կենտրոն, ինչի մասին են վկայում վիմագրերում նշուած նուիրատուութիւնները, փոնախցի կառուցումը, գրատան ստեղծումը եւ այլն: Վիմագրերի քննութեան արդիւնքում փաստագրում են վանքի ԺԲ. դարավերջի սպասաւորներ տէր Գրիգորի, Սահակ քահանայի, ինչպէս նաեւ ԺԳ. դ. վանահայրառաջնորդներ տէր Գրիգորի, տէր Վանակորի (կամ Ակոբի) եւ տէր Ոհանիսի անունները: Այս ամէնի հիմամբ կարող ենք որոշակի վստահութեամբ ասել, որ գոնէ ԺԲ.-ԺԳ. դ. Վաղուհասի վանքը Խաչէնի իշխանութեան առաջնակարգ հոգեւոր կենտրոններից մէկն է եղել:




Նկ. 1 Վաղուհասի վանքի ընդհանուր տեսքը մինչեւ պեղումները (2014 թ.)



Նկ. 2 Գաւթի արեւելեան մատուռները պեղումների ընթացքում (2015 թ., նշուած թուերը յօդուածում արձանագրութիւնների համարներն են):



Արձ. 1




Արձ. 2




Արձ. 3




Արձ. 4



Արձ. 5



Արձ. 6



Արձ. 8



Արձ. 7



Արձ. 9